

դանաբուսերէն և ջրորդանցմէ որոնց տեսակներն հարիւր հազարաւոր են, և անհատներն հարիւր միլիոնաւոր, անհուն բազմութեամբ կ'աձին ու կը բազմանան վահանաչուն՝<sup>1</sup> ու ընկտն ծովուց ընդերացը մէջ:

Ղաւ. զգիտցուիր թէ ինչ կերպով մանրագիտային ջրորդունքը կը բազմանան. կակղամիսներէն բազումք ձուակենդանածին են, իսկ կենդանաբոյսներն այլ և այլ կերպով կը շատնան. այս ստորին կարգի կենդանիներն ոչ միայն ձուով կը բազմանան, այլ նաև պտկունքով. օրինակի համար, կիրացուած կենդանաբուսին վրայ այս պրտկունքներն որոշեալ տեղուանք կը բուսնին, մասնաւոր կէտեր՝ ինչպէս ծառոց ձիւղիցը վրայ, և ոչ ըստ դիպաց. այս պտկունքներն նոր հիդրաներ կ'ըլլան: Կենդանաբոյսք բաժանմամբ ալ կ'աձին ու կը բազմանան:

Գալով ընկտ ձկանց, ասոնք գարնան մեծատարած վտառաւ հիւսիսային ծովերէն կ'իջնեն լշրտափից դէպ 'ի ստորին ափունքները, շարժական կղզեաց կը նմանին՝<sup>4</sup> և 6 հազարամէզը լայն և 10 ու 15 ֆարսախ երկայն. և այն պիսի հոծ և խիտ զանգուած մը կը կազմեն, որ շատ անգամ ոչ խորացափ գունտը և ոչ ձկնորսաց երեքժանին կը ընան վար իջնել ծովուն մէջ. եղեր է երթեմն ալ որ նաւակներ շրջեր են: Վսոնցմէ որչափ որ շանաձկներն ու գիշատիչ թռչունները կը սպառեն՝ մարդ չինար գիտնալ. որչափ որ ցամաք կը զարնէ՝ անհամար է, որչափ որ կորսացուին ամէն տարի ժողովրդոց մնընդեանն համար՝ խելքէ մոքէ վեր է, և ակայն անոնց սակաւագոյն մասն է փայն որ այսպէս կը սպառի:

Շատ մը ուրիշ ձկներ ալ այսպէս ազմաթիւ են. ինչպէս նիւնիչ<sup>2</sup> ըսուած ու կն ու սալամնը, որ այնչափ համեղ յարգի են, հիւսիսային ծովուց մէջ և առատութեամբ կը գտաւին: Ատէպ:

Հիւսիսային գետերէն դէպ 'ի վեր կ'եւ լին եռամկիւնի փաղանգներով, և այն պիսի խիտ առ խիտ լէգէններով՝ որ շատ անգամ արգելք կ'ըլլան ջրոց ընթացիցն:

### Ճանապարհորդութիւնք ընդ ծիր աշխարհի:

(Հետևեալ հետաքրքրական հատումածներն՝ են Անտոն Բիկաֆէգա վեչեցացի ճանապարհորդին, որ Ժ. Պարու մատենագիր է):

Մակեյլանի տորմիղը Սեփեայէն ձամրայ կ'եղի աշխարհիս լոր կողմը պտրտերու համար. Գանարեան կղզիք. Պրազիլ կամ Երկիր Վերձինյի. հոնտեղի բնակչաց տարազը:

1519 օգոստոսի 11<sup>th</sup> Մակեյլանի տորմիղն հինգ նաւով Աեւիլեայէն Ճամբայ ելաւ՝ ուսկից ծով կը թափի Արւատալքիվիր գետը. գրեթէ երկու հարիւր երեսունը օթը մարդ ուներ այս նաւաւ պետա, որոնց հարկաւոր եղածէն բան մը պակաս չեր. նախ՝ Աեւիլեան Աիտոնիա դքսին դղեակը հասան, որ Ավկիանոս մննելու նաւահանգիստը կը սեպուի, և ուսկից Ա. Ա իշենցիսի հըրուանդանը կ'ուղղեն նաւերն. իրենց ընթացքը: Այս հրուանդանս հասարակածն երեսունը օթն աստիճան հեռուէ, և վերն ըսուած Աիտոնիա դքսին դղեկէն 11 ֆարսախ. հօնկից ալ ինչ չուան Աեւիլեա մօտ 17-20 ֆարսախ է: Քանի մը օր հանգիստ առին հոստեղ նաւերը չունեցած պարէննին Ճարելու համար. ամէն օր պատարագ կը տեսնէին, Ճամբայ ելլելու ատենն ալ ամէնքը խոստովանեցան:

Աեպտեմբերի 20<sup>th</sup> ելան այն նաւահանգստէն և նաւերնին դէպ 'ի արեմտեան հարաւ ուղղեցին. 26<sup>th</sup> Դեկտեմբիք՝ Պանարեան կղզիներէն մէկն հասան, որ 25° բարձր է հասարակածէն, ջուր և փայտ առնելու համար: Պանարեան կղզիներէն մէկսւն մէջ ջուր չգրտնուիր. բայց տեսակ մը ամենամեծ ծառ

<sup>1</sup> Գլ. Turbot. ՏՀ. Գուգան պալու:

<sup>2</sup> Գլ. Maquereau. ՏՀ. Ասոգոսիու:

կայ որուն Ճիւղերէն ու տերևներէն առատապէս ջուր կը հոսէ : Ամէն օր անվրէպ կէսօրուան ատէն մատախուղ մը կ'իջնէ երկնքէն ու այս ծառին չորս բոլորը կը պատէ , որով անանկ առատապէս ջուր կը հոսէ որ կղզւոյն բոլոր բնակչացն ու կենդանեացը կը բաւէ :

Հոկտեմբերի 3<sup>եւ</sup>, կէս գիշերուն , առագաստներն ու զղիեցին դէպ 'ի հարաւ , և Եփրիկէի Դասարի ըսուած Պալսէն և անոր դիմացի կղզիներուն մէջէն անցան , որ հասարակածէն տասնըորս ու կէս աստիճան հեռու են . այսպէս շատ օր Խթովպիոյ ու Լուիինէ այի առջեները պտըտեցան , ուր է Աերրա Ի իոնա ըսուած լեռն՝ հասարակածէն ութ աստիճան վեր . մինչև հոս ընդդիմակ քամի մը չունեցան , և եօթանասուն օրուան մէջ յստակ և խաղաղ օդերով հասարակածի ծրին տակ հասան : Դժուարոնի ըսուած խոշոր ձկներն , որոնց ակռաները խիստ սոսկալի են , յաճախ կը մօտենային նաւերուն . ասոնք եթէ ծովուն մէջ մարդու հանդիպին՝ կ'ուտեն . ասոնցմէ ոմանք կարծի բռնուեցան . մեծերը պղտիկներուն պէս համեղ չեն : Այս ճամբորդութեան մէջ մեծ մրրիկ մը ունենալով , տեսակ մը հրավառ բոցեր տեսանք , որոնց Ա . Հեղինէ և Ա . Լիկողայոս է կ'ըսեն . այն պէս մը կը տեսնուեին որ կարծես թէ նաւերէն մէկուն կայմին վրայ կեցած էին , որոնց պայծառութենէն ամենուն ազքը քառորդուան մը չափ զօշուած մնաց . շատերը անանկ անզգայցացան որ սկսան վախնալ մեռնելէ . բայց ծովն հանդարտելով , իւրաքանչիւր ոք իր նախկին էութեանը դարձաւ :

Հասարակածի ծրէն անցնելով կորուսինք հարաւն , և դէպ 'ի արևեմտեան հարաւ երթալով՝ հասանք Պիրազիլ որ 22 և 1/2<sup>0</sup> հակարծային բևեռը կ'իյնայ . այս երկրին ծաղրն է Ա . ( Կոստինոսի ըսուած հրուանդանը , որ ութ աստիճան հեռու է հասարակածէն : Տեսակ տեսակ մրգերով զուլացանք այս երկրիս մէջ , որոնցմէ մէկն եր նաև պարտէ՝ չափանակի համով և շողկամի պէս

երկայն . բէնէս ըսուած պտղէն ալ կերանք որ խիստ ախորժելի է և քաղցր : Աերանք նոյնպէս անդա ըսուած կենդանոյն մնէն որ շատ նման է կօվում մին . գտանք նաև շաքարաբուղիս եղէգներ և ուրիշ անբաւ արմտիք , զուրոնք համառօտութեան համար չենք յիշեր : Արբուհի Ո ու չխային օրը մըտանք այս նաւահանգիստոս , ուր արևել գլխընուս վրայ վնիդ կեցեր էր , այսինքն գագամնակէտ . և այն օրը սամատիկ տօթով նեղուեցանք , բայց ոչ որ չափ հասարակածին տակ : Այս Վերջին նոյն երկիրն ամէն բան առատ կը բխէ . ընդարձակութիւնն ալ այնպէս է որ Ապանիա , Շորդոկալ , Դաղղիա և Իւտալիա մէկտեղ չեն հաւասարիր . տեղացիք աստուած չունին ու բնական օրէնքով կը վարուին , և ինչուան հարիւր քսան և հինգ կամ հարիւր քառասուն տարիի կ'ապրին : Արենց նաւակները միակտուր փայտէ են որոնց գանուէ կ'ըսեն , ու սայրասուր քարերով կը փորեն . բայց այն աստիճանի պինդ քարմբն է ասիկայ , որ երկաթ չունենալնուն ասոնցմնով կը շատանան . այս նաւակներէս մէկուն վրայ երեսուն քառասուն հոգի կրնան կենալ . քաշտինին փուան մը թիակին կը նմանի : Պիրազիլ բնակիչներէն ոմանք սև են , բայց մեզի պէս ճարպիկ ու ճարտար . սովորութիւնն ունին մարդու և իրենց թըշնամոյն միսն ուտելու . կ'ըսեն թէ այս սովորութիւնս աղաջեկած է միակ որդի մը ունեցող կնկանէ . վասն զի օր մը մեռնելով այս տղան , դիստաւածով զինքն սպաննողներէն ոմանք ձեռք իյնալով պառաւուուն առջեր բերուեցան . որ կատաղութեամք վայրենի շան պէտքանին վազելով անսոնցմէ մէկուն ուսուգիշատեց : Ա իրաւորեալն իր տուն փախէլով , զըցուց իր պատըրուած սը , և անկէ եաքը ամէնքն սկսան թըշնամինին յօշել . սակայն բոլորը մէկ ժումով չեն ուտեր , հապա կտոր կտոր ջալ դելով օր մը պախուը կ'ուտեն , ուրիշ օմը խորվածը , թշնամւոյն յիշատակը եւ կար պահելու համար : Ո գեստնէ



Տարտար Պրագիլաց.

Թութակներու փետուրներէ կը շինեն.  
Ետենին ալ կը դնեն երկայն պոչ մը,  
անանկ որ տեսնողն ծիծաղը չկրնար  
բնել։ Ի՞ւրք և կանայք և տղաք, ստո-  
րին շրթանց վրայ երեք ծակ ունին,  
դրոնցմէ դրսի կողմանէ մատ մը երկայ-  
նութեամբ կլորակ քարեր կը կախեն։  
Դուներնին ոչ ու է և ոչ ձերմակ, այլ  
փթենւոյ կը զարնէ։ Դրենց իշխանը գա-  
տ կամ գտուի կը կոչուի, որ անթիւ

թութակներու տէր է։ Հայելոյ մը  
հետ փոխնոց ընելով ութէն ինչուան  
տասը թութակ տուաւ։ Պղտի ապուգ-  
նաներ ալ ունին շատ սիրուն տեսքով,  
որոնց միսը կ'ուտեն։ Հացերնին գեր-  
մակ է, կլօրակ, ծառի մը միջուկով խառ-  
նուած, բայց շատ համեղ չէ։ Տեսակ մը  
թռչուններ կը գտուին այս երկրիս մէջ  
որոնց կտուցը դգալի չափ է, լեզու ալ  
չունին։ Ո՞երսնք երկու ամիս կեցան

այս աշխարհքս և մինչև այն ատեն անձրւ չեկաւ ամենելին . Երկրին խորերն երթալով խել մը վերջինոյ ծառէն կտրեցին ու տուն մը շինեցին . և նաւահան գիստ դառնալու ատեննին դիպուածով անձրեց . բնակիչք սկսան մեզի համար ըսել որ Երկնքէն իջեր էինք , որով հետեւ անձրւ եկաւ : Այս ժողովուրդները շատ հեղ են ու դիւրաւ քրիստոնէական կրօնքը կ'ընդունին :

Բաղակոնաց երկիրն . հոն Խոնի մարդիկը , ու իրենց տարազը :

Կաւահանգիստ դառնալէն տասուիրեք օր վերջը Ճամբայ ելանք , և գնացինք ինչուան 34 աստիճան և Երրորդ մաս մը Հակարջային լայնութեան , ուր անուշ ջրի մեծ գետ մը գտանք , և տեղոյն բնակիչքը մարդակեր են . ասոնց մէ մէկը տեսանք նաւէն՝ որ վիթիւրի էր և ցլու պէս ձայն մ'ունէր . բոլոր բնակիչները ծակէ ծակ կը փախչէին աս հսկաներուն առջեւ : Այսիններէն տասը հոգւոյ շափ նաւակով մը ցամաք ելան , անոնցմէ ոմանց հետ խօսելու , կամաւ ելի լաւ զիրենք բռնելու համար . բայց հսկաներն այնպէս կը վազէին կը ցատքէին , որ չկրցան իրենց համնի : Այս գետոյս բերանն եօթը կզզի կայ , որոնց մէ մեծագունին մէջ ազնիւ գոհարներ կը գտնուին . այս կղզիս կ'ըսուի Հրուանդան դան Ա . Ա'արիամու : Աարծեցինք որ հոնկէ կրնանք հարաւային ծովն անցնիլ . բայց տեսանք որ անցք չկար , որով հետեւ գետին բերանն էր որտասնը եօթը փարսախ լայնութիւն ունէր : Այս մարդակերներա՝ Հյովհաննէս Աղիզիոյ սպանիացի նաւապետը կերած էին , հանդերձ իր վաթսուն ընկերներովն , որոնք մեզի պէս ելեր էին աշխարհք փնտուելու :

Հյամաքէն դէպ 'ի Հակարջային բեեռ երթալով , Երկու կղզիներ ելանք որոնք լի էին ծովային սագերով ու գայլերով . ատոնց բազմութիւնն այնչափ էր որ ժամանան մը մէջ հինգ նաւ կրնայինք ի-

րենցմէ լեցնել . այս սագերս սե են ու չեն կրնար թոշիլ . ձկներով կ'ապրին , և անանկ գէր են որ ուտելու համար հարկ եղաւ վրայի եղը քերել հանել . փետուր չունին , կտուցնին ալ ագռաւուն կը նմանի : Խակ գայլերն շատ տեսակ են , և հորթի շափ խոշոր . զլուխնին կարծես թէ ոսկեզօծ էր . ականջնին պըզտիկ , կլոր . ակուանին ալ մեծ : Այրկուութք ունին մարմայն կպած , որոնք կը նմանին մանր եղունգներով զինուած ձեռուրներու . կատաղի են , ձկներով կ'ապրին : Աաստիկ փոթորիկ մը ելաւ . բայց Երբ նաւերուն կայմերուն վրայ նոյն Երեք հրափայլ լրւսերը Երեցան , որոնք կ'ըսուէին Ա . Հեղինէ , Ա . Աիկողայոս և Ա . Գլարա , իսկոյն քամիին բռնութիւնն իջաւ :

Հոնկէ մեկնելով Հակարջային բեեռին քառասունեինն ու կէս աստիճանը հասանք . և ձմեռ ըլլալով՝ հարկ եղաւ Երկու ամիս հոն կենալու , և ինչուան այն ատեն մարդ շտեսանք . մէյ մ' ալ օր մը դիպուածով յաղթահասակ մարդ մ' եկաւ նաւահանգիստը պարելով ու Երգելով , և գլխուն վրայ փոշի կը ցանէր : Աաւապետը մեզմէ մէկը խրկեց նաւակով ցամաք , որ իրեն ըրածին պէս ըրաւ 'ի նշան բարեկամութեան : Հըսկայն այս տեսնելով՝ կասկածը փարատեցաւ . և այն մարդուն հետ եկաւ մօտիկ կղզի մը նաւապետին հետ տեսնուելու . ափշեցաւ մնաց Երբ տեսաւ զմեզ , և մատը Երկինք վերուցած նշան կ'ընէր , ըսել ուզելով որ մենք Երկնքէն իջեր էինք : Այս մարդս այնպէս բարձրահասակ էր , որ մենք և ոչ գոտուոյն կը հասնէինք . խիստ վայելուց էր , Երեսը մեծ , բոլորտիքը դեղին ներկուած , նոյնպէս աչքին շրջանակը . թուշերուն վրայ Երկու սիրտ քաշէր էր . մազերը Ճերմակ գունաւ որուած էին . հագուստը կենդանւոյ մորթ էր , բարակ կերպով իրարու հետ կարուած : Ան կենդանիին որուն մօրթը հագեր էր , գլխուն և ականջները մեծ էին մատակ ջորւոյ մը ականջներուն ու գլխուն նման . վիզն ու մարմինը ըղտու նման , պոչն ալ ձիու :



Տարազ Բադակոնաց .

Հոկային ոտուըները մորթին մէջ ծածկուած էին որ իրեն հողաթափի տեղ կը ծառայէր : Լարձ ու լայնալիճ աղեղմ' ունէր ձեռքն , որուն լարը նոյն կենդանւոյն ջիլերէն էր . եղեգէ երկայն նետերու խուրձ մ' ալ ունէր , մերին ներուն պէս փետրազարդ . որոնց ծայրը փոխանակ երկաթի՝ սայրասուր քար մ' անցուցեր էր , հրահան քարերու նըման : Լաւապետը կերակուր և ըմպել էր և ուրիշ նման բաներ տուաւ իրեն . դողպատէ մեծ հայելի մ' ալ հանեց

դիմացն , որուն մէջ իսկոյն իր դէմքը տեսնելով հսկան , սաստիկ զարմացաւու ետ ետ ցատկեց , ու ցատկելու ատեն մեզմէ երեք չորս հոգի փուեց գետին . վերջը տուաւ իրեն նաւապետը բոժօժներ , հայլի մը , սանտր և ապակի մարգրիտներ : Լատը ցամաք խրկեցին զինքը , հետը մէկտեղ մեզմէ չորս հոգի զինուած : Լարը իր ընկերներէն մէկը տեսաւ զինքն որ մերիններուն հետ ընկերացած կու գար , վազեց ուրիշներուն իմացնելու , որոնք մերիննե-

րուն հասնելուն պէս, սկսան ցաթքել ու երգել մատերնուն մէկն երկինք վեր ցընելով, և իրենց կերած արմատոյն ձերմակ փոշին կը ցուցընէին, որովհետեւ ուրիշ բան չունին ուտելու : ||Երինները նշան ըրին անոնց որ եթէ կ'ուզէն նաւերը գան . անոնք միայն աղեղնին առնելով, և իրենց կանայքը տեսակ մը կենդանիներու վրայ հեծցընելով, որոնք նման են իշու, ձամբայ դրին . յօհէպէտ ասոնք առջինին պէս մեծդի չէին, բայց աւելի լեցուն կը տեսնուէին . գլուխնին գրեթէ կէս կանգուն երկայն է, և հետերնին վարմի մը մէջ չորս մանր կենդանիներ ունէին . երբ ուզեն ուրիշ կենդանիներ բռնել, ասոնք փայտերու կը կապեն, և երբ մեծերը կու գան պղտի կենդանիներուն հետ խաղալու, ծածուկ դարաններէն փրիններով կը սպաննեն զանոնք : Իսած կենդանիներնէս երեք արու և երեք էգ ունէին հետերնին, ուրիշներ բռնելու համար :

|| Երջն ուրիշ հսկայ մը տեսանք աւելի մեծ և ուրիշներէն աւելի տեսքով, ձեռքն ունէր աղեղ մը և նետերու խուրձ . երբ մօտեցաւ մեզի, զլիսուն դաշելով դարձաւ և երկինք վերուց ձեռուըները . մերիններն ալ նմանն ըրին : Իաւապէտը խրկեց իրեն մակոյկը, և զինքը նաւահանգստին մօտ եղած կը զեակը բերել տուաւ : Իս հսկայս շատ քաղաքավար և շնորհալի եր . կը ցատկէր կը պարեր, և ցատկելու ատեն ութերը թիզ մը գետին կը խրէին : Խրկայն ատեն կեցաւ մերիններուն հետ, որոնք անունը չովչաննէս դրին . խիստ յստակ կ'ըսէր չիսուս, հայր մեր որ յերկինս, լողոյն քեզ ||արիամ, Յովհաննէս, բայց խոշոր ձայնով մը : ||Եծնաւապէտը կտաւէ շապիկ մը ընծայ տուաւ իրեն, գլխարկ մը, հայելի, սանտր և ուրիշ նման բաներ, և իրեն ներուն քով արձըկեց զինքը, որ ուրախութեամբ և գոհութեամբ գնաց : Խրկրորդ օրը նաւապէտին քով եկաւ, և ըսած կենդանիներնէս մէկ մը բերաւ իրեն . անկէ վերջը ալ չտեսնուե-

ցաւ . թերեւ իրեններն սպաննեցին զինքը մեզի հետ խօսելուն համար :

Տասնըհինգ օրէն այս հսկաններէն չորս հոգի ալ եկան մեզի, բայց առանց զէնքի : Իաւապէտը ասոնցմէ երկուքը, որոնք աւելի պատանեգոյն և հանդարտաբարոյ կը տեսնուէին, ուզեց քովը պահել այսպիսի հնարքով մը . տուաւ իրենց դանակներ, մկրատներ, հայելիներ, բոժոժներովլեցուեցաւ, նաւապէտը երկու շղթայ բերել տուաւ, և ոտուընին մէջը խօթեց, բայց առանց սեղմելու, ձեւացընելով որ կ'ուզէ իրենց պարգևել . շղթաներն երկաթէ ըլլալով իրենց շատ հաճոյ անցաւ, թէպէտ չէին կը նար գործածել, ձեռուընին ունեցած խաղալիկներուն պատճառաւ : ||Եկալ երկու հսկանները ուզեցին օգնել ունեցածնին տանելու համար, բայց ընդդիմացաւ նաւապէտը . և երբ շղթաներն ամրապնդեցին, տարակոյսը զիրենք առաւ . նաւապէտը ապահովցուց զիրենք ու հանդարտեց . սակայն հսկանները խաբուելինին որ տեսան, ցուլերու պէս բառաշելով՝ ուժգին սէրէպրու իրենց օգնութեան կը կանչէին . նոյն վայրկենին զիրենք իրարմէ բաժնելով զատ զատ նաւերու մէջ փակեցին :

||Եկալ երկուքին ձեռքը չկրցանք կապել . և երբ ինն հոգի մեծ աշխատութեամբ հազիւ կրցանք ասոնցմէ մէկը գետին պառկեցընել ու ձեռուըները կապել, ինքը շուտով մը կապերը քակեց և փախսաւ . այսպէս ըրին մէկանոնք ալ որ անոնց հետ մէկտեղ եկեր էին . մէջերնէն պղտիկները աւելի երագ կը վազէին . փախչելու ատեն քաշեցին աղեղնին, ու մեզմէ մէկուն զիստը վիրաւորելով՝ մեռուցին : ||Հրացան և ոչ բալիստը կրցան իրենց հասնելու . վասն զի մէյմ' ասդիէն մէյմ' անդիէն կը վազէին : Հսկաններուն երթալէն վերջը, թաղեցինք սպաննեալը :

Իս մարդիկն երբ ստամբսի տկարութիւն մ'ունենան, ափերնին բացած բերաննին կը խօթեն ու նետի մը ծայ,

ը ինչուան կոկորդնին հասցընելով ա-  
րիւնախառն կանաչ մաղձ կը ժայթքեն։  
Երբ գլուխնին ցաւի՝ ծակատնուն վը-  
րայ Ճեղք մը կ'ընեն։ Նոյնպէս կ'ընեն  
թևերնուն ու սրունքներնուն վրայ և  
մարմնոյն ամէն կողմէն արիւն կը հա-  
նեն։ ( Ը մը բռնած հսկանիս, որ նա-  
ւուն մէջն էր, կ'ըսէր որ ունեցած ա-  
րիւնը չէր ուզէր ալ իր տեղը կենալ, և  
ասոր համար հիւանդութիւն կը պատ-  
ճառէր իրեն։ Ի սոնք մազերնին աբե-  
ղաներու նման կը կտրեն, թէպէտ քիչ  
մ'աւելի երկայն։ ծամականին բամ-  
բակէ հիւսուած է, որուն հանգուցին  
մէջ կը խօթեն իրենց փքինները երբ  
որսի կ'երթան։ Ա, մէկը մեռներու  
ըլլայ, կ'ըսեն թէ 10 կամ 12 գե կ'ե-  
րեան օդուն մէջ, որոնք կը ցատկեն  
կը պարեն դիակին չորս կողմը, և որոնք  
մարմիննին ներկած են, և թէ աս սա-  
տանաներէն մէկը աւելի մեծ է, որ  
մեծ հանդէս և ուրախութիւն կ'ընէ։  
այս մեծ սատանան Սէրեպոս կ'անուա-  
նեն իրենք, կրտսերներն ալ Քէլսէ։  
Հսկայն՝ որ մեր նաւն էր, նշաններով  
կը յայտնէր որ տեսեր էր ինքը աս սա-  
տանաները, գլխընուն վրայ երկու կո-  
տոշ, մազերնին ցոտս երկայն, և բե-  
րաններնէն ալ կրակ թափելով։ Ո՞եծ  
նաւապետը Շաղակոնք անուանեց այս  
ժողովուրդները, որոնց մեծ մասը վե-  
րոյիշեալ կենդանւոյն մորթը կը հագ-  
նէին։ հաստատ բնակութիւն չունին,  
հապա այն կենդանւոյն մորթէն հիւղի  
պէս բան մը կը շինեն, և տեղէ տեղ  
կը փոխուին միշտ։ իրենց պարէնն է  
հում միս և քաղցր արմատ մը զոր կը  
կուն գաբար։ Ո՞եր հսկային օրուան  
մէջ կերածն էր զամբիւղ մը պաքսի-  
մատ և կէս դոյլ ջուր։

կը շարունակուի։

### Փաւստու Բուզանդացի։

Խամանակը, որ իր հնութեամբը  
ու տեսակ ճշմարտութեանց վրայ երկ-

բայելի քող մը կը ձգէ, որով չենք կըր-  
նար զանոնք պարզապէս ակն յայտնի  
նկատել, կը տեսնենք որ նոյն մթին քո-  
ղը նաև Փաւստոսի Ի առզանդացւոյ կե-  
նացն ու անոր հանգամանացը վրայ ձը-  
գած է. և երեք տեսակ ճշմարտութի  
աղօտ անստուգութեան մը ներքե ծած-  
կուած կը գտնենք։ Կախ իրեն ինչ  
ազգէ ըլլալը, երկրորդ ինչ լեզուով մա-  
տենագրելը, և երրորդ երկասիրութե-  
ամբողջութիւնը։ Այս որովհետեւ ըստ  
գեղեցիկ հայկաբան ոձոյն՝ ոչ աննշան  
հատոր մըն է իր գրուածքը մեր մատե-  
նագրութեան մէջ, կ'արժէ որ մենք  
ալ ուրիշ մատենագրաց մէջ եղած յի-  
շատակութիւններն քննելէն վերջը, ու-  
շի ուշով ընթեռնումք նաև իր պատ-  
մագրութիւնը, ունեցած տարակոյսնիս  
ըստ կարի պարզելու համար։

Ի մդդ գալով մեր առաջին ինոդրոյն,  
կը տեսնանք որ Փաւստոս իր ժամանա-  
կին պատմութիւնը պատմելու ատենը  
կը խոստանայ նաև իր վրայ տեղեկութի  
տալ, բայց դեռ խոստացած տեղը չհա-  
սած, Ե և Զ գլուխներուն մէջ, Պար-  
սից ձեռքին տակ եղած Հայոց մասին ե-  
րեւելի եպիսկոպոսները յիշատակելով,  
այսպէս կը գրէ. ( Պար. Զ. Գլ. Ե. )

“ Այ առ այնմ ժամանակաւ Փաւստոս  
եպիսկոպոս սա ’ի ժամանակս Կերսէսի  
եպիսկոպոսապետին՝ էր ’ի տան նորին  
իրը թելակալ, . ուր ուրիշ եպիսկո-  
պոս մըն ալ յիշելէն ետե կ'աւելցընէ։  
“ Այս էին սոքա ’ի տեսչութի աղքատա-  
նոցացն հաւատացեալք, և յամենայնի  
էին հաւատարիմք նորա ’ի ժամանակս  
նորա, և յամս իյուրովու և Մշակայ  
երկուց թագաւորացն բաժանաւորացն,  
մինչ դեռ ևս կային նոքա կենդանիք,, :

Ի մդդ թէ որ այս յիշատակութեամբս  
մէկը, զնոյն ինքն մատենագիրը իմանայ,  
հաւանականաբար յօյն է պիտի զուրցէ,  
որովհետեւ նոյն գլուխներուն մէջ դար-  
ձեալ յիշելով զնոյն Փաւստոսը և անոր  
մէկ եղայրը կ'ըսէ “ և էին սոքա ազ-  
գաւ Հոռոմ,, :

Հայոց ասոնցմէ աւելի համոզողական  
տեղեկութիւն մը կընան ընթերցողք